

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՆԱ ԿՈՍՏԱՆՏԻ

**ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ և ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
(ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

**Ժ. 02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Լիանա Սամվելի Հովսեփյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Աշոտ Վոլոդյայի Գալստյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Մանանա Գուրգենի Դալայան
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

**Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026 թ. մարտի 23-ին՝ ժամը
15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող
ԲԿԳԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ 0015
Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. փետրվարի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան
Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից լեզվաբանությունը մեծ ուշադրություն է դարձնում լեզուների համեմատական ուսումնասիրությանը: Լեզուների կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների լիարժեք ըմբռնումը հնարավոր է միայն դրանց զուգադրական քննությամբ: Այսպիսի ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն ինչպես տեսական լեզվաբանության, այնպես էլ լեզուների գործնական ուսուցման համար:

Զուգադրական լեզվաբանությունը, որի հիմնական նպատակն է երկու կամ մի քանի լեզուների համեմատական վերլուծությունը և դրանց հիման վրա ընդհանուր եզրահանգումների կատարումը, այսօր հասել է զարգացման այնպիսի մակարդակի, որ կարող է արդյունավետորեն լուծել մի շարք տեսական և ուսուցողական խնդիրներ: Միաժամանակ, մեծ ուշադրություն է դարձվում նաև առանձին լեզուների բառակազմական համակարգերի ուսումնասիրությանը, քանի որ հենց բառակազմությունն է այն հիմնական միջոցներից մեկը, որի շնորհիվ լեզուն մշտապես հարստանում է նոր բառերով: Դա նպաստում է ոչ միայն լեզվի բառապաշարի ընդլայնմանը, այլև խոսողների լեզվական կարողությունների զարգացմանը:

Հայերենի և անգլերենի զուգադրական ուսումնասիրությունը բառակազմության և իմաստաբանության մակարդակում հնարավորություն է տալիս բացահայտելու երկու լեզուների բառակազմական և իմաստաբանական համակարգերի միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերն են:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները՝ դրանց ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու նպատակով:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը՝ վեր հանելով երկու լեզուներում դրանց տարածվածության քանակական հարաբերակցությունը,
- վերլուծել հարադրավոր բայերի կառուցվածքային-տիպաբանական տարբերությունները՝ բաղադրիչների բառակազմական կաղապարների զուգադրական քննության միջոցով,
- դասակարգել երկբաղադրիչ բայական դարձվածքները (ԵԲԴ) ըստ ոչ բայական բաղադրիչի իմաստային խմբերի և վեր հանել համեմատվող լեզուներում

դրանց բառային-ձևաբանական ու դարձվածային իմաստի ձևավորման առանձնահատկությունները,

- իրականացնել անգլերենի և հայերենի նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի կառուցվածքային-իմաստաբանական քննություն՝ վեր հանելով դրանց տիպաբանական տարբերությունները, գործածության առանձնահատկությունները,

- համեմատել անգլերենի և հայերենի up, above-*վեր/վերև*, against-*դեմ/ընդդեմ*, back, aback, after, behind-*հետ/հետև* բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի իմաստային դրսևորումները և վեր հանել դրանց միջլեզվական նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայերենի և անգլերենի հարադրական կազմությունների, մասնավորապես բայական հարադրությունների վերաբերյալ զուգահրակական ուսումնասիրությունները քիչ են: Կատարվել է հայերենի և անգլերենի՝ անվանական/գոյական/ հիմքերով բաղադրությունների ուսումնասիրություն՝: Հայերենի և անգլերենի հարադրական բայական կազմությունների վերաբերյալ զուգահրակական ուսումնասիրություններ չկան:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային, իմաստաբանական և գործառական առանձնահատկությունների համակարգված զուգահրակական վերլուծությամբ:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են նկարագրական, զուգահրակական, վերլուծության և կադապարման մեթոդները: Նկարագրական մեթոդով ներկայացվել են ուսումնասիրվող լեզվական միավորների կառուցվածքը, դրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը: Զուգահրակական մեթոդը հնարավորություն է տվել բացահայտելու հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի նմանություններն ու տարբերությունները: Վերլուծության մեթոդով ուսումնասիրվել են ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները: Կադապարման մեթոդի կիրառմամբ մշակվել են հարադրավոր բայերի բաղադրիչների ընդհանրացված մոդելներ: Լեզվական նյութի ուսումնասիրությունն իրականացվել է համաժամանակյա մոտեցմամբ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Կատարված հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ հայերենի և անգլերենի բառակազմական և իմաստաբանական համակարգերի հետագա ուսումնասիրությունների համար: Աշխատանքում ներկայացված դիտարկումները, հարցադրումները և դրանց լուծումները կարող են հետաքրքրել այն լեզվաբաններին, որոնք զբաղվում են հայերենի և անգլերենի

¹ Կարապետյան Ս., Գոյականական հիմքերով բաղադրությունները հայերենի և անգլերենի բառակազմական համակարգում, թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2016:

բառակազմության և բառային միավորների կառուցվածքային և իմաստաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության հարցերով:

Ատենախոսությունն ունի տեսական արժեք նաև տիպաբանական լեզվաբանության տեսանկյունից, քանի որ այս ուսումնասիրության եզրակացությունները կարող են նպաստել հայերենի և անգլերենի բառակազմության տիպաբանական բնութագրումների ճշգրտմանը:

Բացի տեսական նշանակությունից՝ աշխատանքը կարևոր է նաև գործնական առումով, այն կարող է օգտակար լինել հայերենի և անգլերենի բառագիտությանը և բառակազմությանը, ինչպես նաև իմաստաբանությանը նվիրված դասընթացներում: Ատենախոսության արդյունքները կարող են օգտակար լինել ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, մեթոդական ուղեցույցների պատրաստման, ինչպես նաև բառակազմական բառարանների կազմման համար:

Ներկայումս, երբ անգլերենը համարվում է աշխարհի ամենատարածված և գործնականում կիրառվող լեզուներից մեկը, նման զուգադրական ուսումնասիրությունները հայալեզու ուսանողների և լեզվի ուսուցիչների համար առանձնապես կարևոր են, քանի որ հայերենի և անգլերենի միջև զուգահեռներ անցկացնելու միջոցով ուսուցման գործընթացը դառնում է ավելի արդյունավետ և հասկանալի:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացություններից: Աշխատանքի վերջում տրված են հապավումների և օգտագործված գրականության ցանկերը: Ատենախոսության ծավալը 121 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվում են հետազոտության օբյեկտը, գիտական նորույթը և մեթոդաբանությունը: Ներկայացվում է հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի ուսումնասիրության պատմությունը:

ԳԼՈՒԽ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

1.1 Հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում ներկայացված են հարադրավոր բայերի խմբերը ըստ ոչ բայական բաղադրիչների խոսքիմասային պատկանելության: Համեմատվող լեզուներում հարադրավոր բայերի բայական բաղադրիչը անորոշ դերբայն է, որն արտահայտում է գործողության, եղելության իմաստ: Մինչդեռ ոչ բայական բաղադրիչը կարող է պատկանել տարբեր խոսքի մասերի: Բայի հետ կարող են հարադրվել գոյականը, ածականը, թվականը, դերանունը, մակբայը, կապը/նախդիրը, ծայնարկությունը, դերբայը:

Գոյական բաղադրիչ: Հարադրավոր բայերում որպես ոչ բայական բաղադրիչ գործածվում են հիմնականում այն գոյականները, որոնք ունեն համապատասխան բայի հետ հարադրվելու և դրա հետ միասին բառային նոր իմաստ արտահայտելու տրամաբանական հիմք: Հայերենի հարադրավոր բայերի շարքում շատ են գոյական բաղադրիչ ունեցող միավորները: Հայերենում գոյական բաղադրիչ ունեցող շուրջ 3600 հարադրություն կա (ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»)¹, իսկ անգլերենում՝ շուրջ 1200 (ըստ Ա. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարանի»)²: Օրինակ՝ *ամոթը կորցնել, աչքով անել, carry one's point* «նպատակին հասնել», *change hands* «ձեռքից ձեռք անցնել»:

Ածական բաղադրիչ: Հայերենում ածական բաղադրիչ ունեցող մոտ 560 հարադրավոր բայ կա (ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»): Հայերենում սա երկրորդ ամենամեծ խումբն է գոյական բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերից հետո: Անգլերենում կա ածական բաղադրիչ ունեցող մոտ յոթ տասնյակ հարադրավոր բայ (ըստ Ա. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարանի»): Օր.՝ *թեթև գալ, լայն ապրել, do good* «օգուտ բերել», *see red* «սաստիկ զայրանալ», *feel blue* «տխուր/ընկճված զգալ»:

Թվական բաղադրիչ: Համեմատվող լեզուներում թվականը հազվադեպ է գործածվում հարադրավոր բայերում: Օրինակ՝ *երկու անել, մեկ լինել, ութ գրել, become one* «ամուսնանալ», *go fifty-fifty* «հավասար կիսել», *take ten* «շունչ առնել»:

Դերանուն բաղադրիչ: Դերանուն բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը համեմատվող լեզուներում փոքրաթիվ են: Օրինակ՝ *իրար անցնել, իրեն կորցնել, իրեն ուրել, beat it* «հեռանալ», *catch it* «կշտամբանք, պատիժ ստանալ»:

Մակբայ բաղադրիչ: Հայերենում կան մակբայ բաղադրիչ ունեցող մոտ չորս տասնյակ հարադրավոր բայեր (ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»), ընդ որում դրանց մեծ մասը տեղի և ուղղության մակբայներ են, ինչպես՝ *դեսուդեն գցել, վերիվար անել, քարեքար գցել*: Անգլերենում կա մակբայ բաղադրիչ ունեցող մոտ 2000 միավոր (ըստ Օքսֆորդի դարձվածային բայերի բառարանի)³: Անգլերենում այս միավորները քանակով երկրորդ տեղն են զբաղեցնում: Հարադրավոր բայերի բաղադրիչ են դառնում հիմնականում տեղի և ուղղության մակբայները, ինչպես՝ *come back* «1. վերադառնալ, 2. հիշել», *fall off* «նվազել, քշանալ», *put out* «դուրս անել, հանգցնել մարել»:

Կապ/նախդիր բաղադրիչ: Հայերենում կա կապ բաղադրիչ ունեցող շուրջ 174 հարադրավոր բայ (ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»): Հարադրավոր բայերի բաղադրիչ հիմնականում դառնում են տեղի կամ տարածական իմաստ ունեցող կապերը: Վերուծական բայերի կազմում ավելի հաճախ հանդիպում են *մեջ, վեր, վրա, փակ, ցած* կապերը, ինչպես՝ *մեջ ընկնել, վրա բերել, վեր թռչել, փակը դնել, ցած բերել*: Անգլերենում կա նախդիր բաղադրիչ

¹ Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976:

² Кунин А. В., Англо-русский фразеологический словарь, "Русский язык", Москва, 1984.

³ Oxford Phrasal Verb Dictionary, Oxford University Press, New York, 2001

ունեցող ավելի քան 3000 բայական հարադրություն (ըստ Օքսֆորդի դարձվածային բայերի բառարանի), ինչպես՝ bang into «հարվածի գալ, բախվել մի բանի», believe in «հավատալ»:

Նախդիր և մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերում բայը հարադրվում է նախդրի և մակբայի հետ միաժամանակ: Այս միավորները հատուկ են միայն անզերենին: Օրինակ՝ average out at, come up with, put up with:

Ձայնարկություն բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը նույնպես փոքրաթիվ են: Օրինակ՝ *երանի տալ, հարայ կանչել, հափ անել, հաֆ անել, cry hurrah* «ուրախություն արտահայտել, ուռա գոռալ», *give smb the ha-ha* «ծեղք առնել, ծաղրի առարկա դարձնել», *say hush* «լռեցնել»:

Դերբայ բաղադրիչ: Համեմատվող լեզուներում քիչ են նաև դերբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը: Օրինակ՝ *թքած ունենալ, սառած մնալ, cut smb dead* «արհամարհել մեկին», *send flying* «ուժով հետ նետել»:

Հայերենում գերակշռում են գոյական բաղադրիչով կազմությունները, մինչդեռ անզերենում առավել տարածված են նախդիր և մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը: Հայերենը գործողությունը կապում է առարկայական պատկերների հետ, իսկ անզերենն ավելի շատ շեշտում է գործողության ուղղվածությունը և տարածական հարաբերությունը:

1.2 Ոչ բայական բաղադրիչների բառակազմական կաղապարները

Ուսումնասիրության այս հատվածում զուգադրական քննությամբ ներկայացվում են ժամանակակից հայերենի և անզերենի հարադրավոր բայերի անվանական բաղադրիչների բառակազմական կաղապարները:

Զուգադրվող լեզուներում հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչները ոչ միայն պատկանում են տարբեր խոսքի մասերի, այլև աչքի են ընկնում բառակազմական բազմազանությամբ:

Ժամանակակից հայերենի ու անզերենի հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչների բառակազմական կաղապարները ներկայացնելու համար կիրառել ենք Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» գրքում՝ կիրառված սկզբունքը և որոշ պայմանական նշաններ՝ S-հիմնական ձևույթ, a-աձանց, f-քերականական մասնիկ, j-հոդակապ, c-շաղկապ:

Համեմատվող լեզուներում շատ են այն միավորները, որոնց ոչ բայական բաղադրիչը հիմնական ձևույթ է՝ արմատական բառ: Հիմնական ձևույթով արտահայտված բաղադրիչը կարող է պատկանել տարբեր խոսքի մասերի և հանդես գալ թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերով: Հայերենում կան S, Sf, Sff կաղապարները, իսկ անզերենում՝ S, Sf, fS կաղապարները: Օրինակ՝ Sf կաղապար՝ *արևը խավարել, կարմրին տալ, նեղը գցել, make amends* «իրավիճակը հարթել, վնասները փոխհատուցել», *see things* «զառանցել, տեսիլքներ ունենալ», fS կաղապար՝ *take a*

¹ Հովսեփյան Լ. Ս., Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, «Ատոլիկ» հրատ., Երևան, 2016, էջ 83:

bite, take a break, Sff կաղապար՝ կապերը խզել, հոնքերը կիտել, նալերը տնկել: Այս կաղապարը բնորոշ է հայերենին, որտեղ մենիմաստ քերականական մասնիկները կարող են հաջորդաբար կցվել բառահիմքին:

Նախածանցավոր կազմություններ: Այս խմբի մեջ կարելի է առանձնացնել հետևյալ կառուցվածքային կաղապարները՝ հայերենում՝ aS, ajS, aaSf, իսկ անգլերենում՝ aS: Օրինակ՝ դժբախտ լինել (aS), գերածախս տալ (ajS), think aloud «բարձրաձայն մտածել» (aS):

Վերջածանցավոր կազմություններ: Հայերենում այս խմբի մեջ են մտնում Sa, Saf, Sfa, Saa, իսկ անգլերենում՝ Sa, Saf, fSa կաղապարներով կազմված բաղադրիչները: Օրինակ՝ թանկություն գցել (Sa), թագավոր նստել (Sa), sink one's differences (Saf) «տարածայնությունները վերացնել», curtail freedom (Sa) «սահմանափակել ազատությունը»:

Զուգադրվող լեզուներում կան նաև երկու արմատից և/կամ ածանցից և/կամ քերականական մասնիկից կազմված բաղադրիչ ունեցող հարադրավոր բայեր: Հայերենում դրանք ներկայացված են SS, SSa, SSf, SfS, SSaf, SfSf, SaSa կաղապարներով, իսկ անգլերենում՝ SS, SSf, fSS, SaSa կաղապարներով կաղապարներով: Օրինակ՝ բերանքաց մնալ (SS), երեսձեռանք տալ (SSa), explode a bombshell (fSS) «ցնցող մի բան անել/ասել», jump the broomstick (fSS) «ամուսնանալ առանց արարողակարգի»:

Հայերենում բավականին մեծ թիվ են կազմում այն հարադրավոր բայերը, որոնց ոչ բայական բաղադրիչը հոդակապով բառ է: Հոդակապով ոչ բայական բաղադրիչները ներկայացված են SjS, SjSa, SjSf, SjSaf, SajS, SfjSf, SjSff, aSjS կաղապարներով: Օրինակ՝ գեպրնասող տալ (SjS), փակագծերը բացել (SjSff):

Հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչը կարող է լինել բաղիյուսական բարդություն: Սրանք հիմնականում ու շաղկապով կապված երկու հիմնական ձևույթից կազմված բառեր են, որոնք որոշ դեպքերում ունեն ածանցներ և/կամ քերականական մասնիկներ: Կան ScS, SfcSf, ScSf, ScSa կաղապարները: Օրինակ՝ դեսուդեն ընկնել (ScS), խեղումիտքը թռչել (ScSf):

Անգլերենում բաղադրիչների պարզությունը պայմանավորված է նրա վերլուծական տիպով, որտեղ հիմնական իմաստային ծանրաբեռնվածությունը կրում են ոչ թե բառի ներքին կառուցվածքը, ածանցները կամ վերջավորությունները, այլ բառերի դասավորությունը և համատեքստը: Ի տարբերություն անգլերենի՝ հայերենն օգտագործում է բարդ բառեր ստեղծելու իր համադրական ներուժը՝ ոչ բայական բաղադրիչի ներքին կազմության միջոցով հարադրությանն ավելի խորը իմաստային ու ոճական երանգավորում տալու համար:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԿԱՐԱԴԴԻՉ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ (ԵԲԴ) ԵՎ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

2.1 ԵԲԴ-ների տեսակները ըստ ոչ բայական բաղադրիչի իմաստի

Համեմատվող լեզուներում կարելի է առանձնացնել ԵԲԴ-ների համեմատաբար մեծ խմբեր՝ ըստ ոչ բայական բաղադրիչի իմաստի. ԵԲԴ-ներ, որոնցում ոչ բայական բաղադրիչը վերաբերում է **մարդու մարմնին կամ մարմնի մասերին** (օր.՝ բուռը հավաքել «1. իրեն ենթարկել, 2. սանձել, զսպել», վզին նստել «1. հոգս լինել, մեկի հաշվին ապրել, 2. օգտագործել մեկին», save one's face «բարի անունը, պատիվը փրկել/պահել», bite one's nails «փխտ անհանգստանալ»), **մարդու հոգեկան աշխարհին, մտավոր և ֆիզիկական կարողություններին, հատկանիշներին, զգացմունքներին**, (օր.՝ ուժը կորցնել «կարևորությունը կորցնել, նշանակություն չունենալ», միտքը պղտորել «1. մտատանջել, 2. վատ բան ներշնչել», blow smb's mind «ցնցել, տպավորել մեկին», fall in love «սիրահարվել»), **բնության տարբեր երևույթների** (օր.՝ հողին հավասարեցնել 1. «հիմնահատակ կործանել, ոչնչացնել, 2. ներկայացնել իբրև բոլորովին անպետք, վատաբանել», սառույցը կոտրվել «մի բան կաշկանդող արգելքը վերանալ, ջերմ հարաբերություն հաստատվել, սառնությունը անցնել», catch the sun «արևից վառվել, արևայրուք ստանալ», plow water «ջուր ծեծել, անիմաստ ժամանակ վատնել մի բանի վրա», կենդանական աշխարհին (օր.՝ կրուցը քաղցրացնել «1. կաշառել, կաշառք տալ, 2. ուտել, անուշ անել», պոչ կպցնել «չհավանելով՝ որևէ թերություն կպցնել», be a rat «դավաճան լինել», show one's claws/teeth «ատամները/ճանկերը ցույց տալ»), **սննդամթերքին, տեղի, տարածության** իմաստներին:

Վերոնշյալ յուրաքանչյուր իմաստային խմբերի համար իրականացրել ենք հայերենի և անգլերենի նույն կամ համարժեք բաղադրիչ ունեցող ԵԲԴ-ների իմաստային համեմատություն: Օր.՝ աստղերը մարդու համար անհասանելի են, ուստի երկնքից աստղեր բերել դարձվածքը ունի «անհնարինը անել» իմաստը: Այս պատկերավորումը և իմաստը ընկած են նաև աստղ (վար) բերել դարձվածքի հիմքում: Անգլերենում էլ կան aim for the stars, shoot for the stars «բարձր նպատակներ դնել, մեծ հավակնություններ ունենալ», reach for the stars «ձգտել անհասանելի թվացող որևէ բանի»: Կան նաև միայն մեկ լեզվին հատուկ ԵԲԴ-ներ, ինչպես՝ աստղը ընկնել, աստղը խավարել, curse one's stars «բախտն անիծել»:

Չնայած հայերենի և անգլերենի հարադրավոր բայերն ու դարձվածքները ձևով ու կառուցվածքով տարբերվում են, դրանց իմաստային հիմքը հաճախ նույնն է: Շատ դեպքերում մարդկային մտածողությունն ու աշխարհընկալումը երկու լեզուներում էլ նմանատիպ պատկերավոր լուծումներ են գտնում: Միևնույն ժամանակ, այն դարձվածքները, որոնք չունեն իրենց համարժեքները մյուս լեզվում, ցույց են տալիս յուրաքանչյուր ժողովրդի ինքնատիպ մտածողությունը, որը բնորոշ է միայն տվյալ ժողովրդի աշխարհընկալմանը:

2.2 ԵԲԴ-ների բառային-բայական առանձնահատկությունները

ԵԲԴ-ները թեև կառուցվածքով տարբերվում են համադրական բայերից, այնուամենայնիվ դրսևորում են բայ խոսքի մասին հատուկ մի շարք առանձնահատկություններ: Նախևառաջ դրանք արտահայտում են գործողության, եղելության, ընթացքի իմաստ: Շատ ԵԲԴ-ներ կարող են փոխարինվել համարժեք համադրական բայով, ինչպես՝ *ոլորերը մեկնել* «մեռնել», *գլուխ փալ* «ողջունել», *bring up-educate, raise* «կրթել, դաստիարակել», *shake a leg- hurry* «շտապել»:

ԵԲԴ-ները և հարադրավոր բայերը բայական բազմանդամ դարձվածքների հիմքն են և կարող են ընդարձակվել՝ նոր անդամներով համալրվելով: Օրինակ՝ *ականջները փոխ փալ* «ցրված, անուշադիր լինել, չլսել», **get up** on the left foot «ձախ ոտքից վեր կենալ»:

Համեմատվող լեզուներում շատ ԵԲԴ-ներ ունեն համանուններ, օրինակ՝ *վրա գալ* «հարձակվել»-*վրա գալ* «սկսել գիրանալ, լցվել», *հացը կտրել* «ապրուստի միջոցից զրկվել»-*հացը կտրել* «ուտելիք ճաշակել, հյուրասիրվել», *run out* «ձգվել, տարածվել»-*run out* «սպառվել, վերջանալ», *put smth out* «մարել, հանգցնել»-*put smth out* «հրապարակել, տարածել»:

Կարող են լինել հոմանիշ ԵԲԴ-ներ, ինչպես՝ *գլուխը ջարդել-աչքը հանել* «սաստիկ ծեծել», *ոլորերն ընկնել-բերան ծռել* «խնդրել, աղաչել», *put on-switch on-turn on* «միացնել»:

Կարող են լինել հականիշ ԵԲԴ-ներ, ինչպես՝ *միտքը գալ* «հիշել, մտաբերել»-*մտքից հանել* «չհիշել, մոռանալ», *չոփ դառնալ* «խիստ նիհարել»-*խոզ դառնալ* «խիստ գիրանալ», *slow down* «արագությունը նվազեցնել»-*speed up* «արագությունն ավելացնել», *put on* «հագնել»-*take off* «հանել»:

2.3 ԵԲԴ-ների դասակարգումը ըստ բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի

Դարձվածային իմաստ ունեցող հարադրավոր բայերն արտահայտում են ամբողջական պատկերավոր իմաստ, որը հնարավոր չէ վերլուծել՝ քանի որ բաղադրիչների շարահյուսական կապը մթազնաձ է: Սակայն ակնհայտ է այն փաստը, որ որոշ ԵԴԴ-ներում բաղադրիչները ավելի քիչ են կապված, քան մյուսներում²: Վ. Վինոգրադովը առանձնացնում է դարձվածքը կազմող բաղադրիչների իմաստային ձուլվածության երեք աստիճան՝ դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն, դարձվածային կապակցություն³:

Դարձվածային սերտաճումը իմաստային առումով անբաժանելի դարձվածային միավոր է, որի ընդհանուր իմաստը հնարավոր չէ բխեցնել բաղադրիչների ո՛չ ուղիղ, ո՛չ էլ փոխաբերական իմաստներից: Դարձվածային

¹ Langacker R.W., Foundations of Cognitive Grammar, Vol. I: Theoretical Prerequisites, Stanford University Press, Stanford, 1987, p. 448.

² Gibbon D., Idiomaticity and Functional Variation: A Case Study of International Amateur Radio Talk, Language in Society, 10(1), 1981, p. 22.

³ Виноградов В.В., Избранные труды. Лексикология и лексикография, Изд. «Наука», Москва, 1977, с. 140-161.

սերտաճումները հաճախ կոչվում են *իդիոմներ*: Օրինակ՝ *կորոզներ դնել* «ամուսնուն դավաճանել», *էջ կտրել* «շվարել, ապշել, ապշած մնալ», *kick the bucket* «մեռնել», *spill the beans* «զաղտնիքը բացահայտել»:

Դարձվածային միասնությունների բաղադրիչները կորցրել են իրենց բառային իմաստները, սակայն բայական դարձվածքի իմաստը կարելի է կռահել բաղադրիչների փոխաբերական իմաստից: Պատկերավոր իմաստը այս կազմություններում առաջացել է բաղադրիչները փոխաբերական իմաստով գործածելու շնորհիվ: Դարձվածային միասնությունները իմաստային առումով ամբողջական են: Օրինակ՝ *գլխին նստել* «մեկին իրեն ենթարկել», *վիզ ծռել* «մեկի առաջ խոնարհվել, խեղճանալ, աղաչել», *cut smb short* «ընդհատել մեկին», *show one's teeth* «ատամները ցույց տալ»:

Դարձվածային կապակցություններում բաղադրիչների կապը ավելի թույլ է: Դարձվածքի իմաստը հեշտ ըմբռնելի է: Այս կազմություններում բաղադրիչներից մեկը պահպանում է իր բառային իմաստը, իսկ մյուսը գործածվում է փոխաբերաբար: Դրա շնորհիվ դարձվածքը պահպանում է պատկերավոր բնույթը: Դարձվածային կապակցությունները իմաստապես ամբողջական և ինքնուրույն են: Օրինակ՝ *կյանքը եռալ* «աշխուժություն, աշխատանքային եռուզեռ տիրել», *խոսքից անցնել* «մեկի խոսքը, կամքը, պահանջը չկատարել», *wage war* «պատերազմել», *take interest* «հետաքրքրվել», *render assistance* «օգնություն, աջակցություն տրամադրել»:

Այսպիսով, Վ. Վինոգրադովի դարձվածաբանական միավորների իմաստային ծովավածության աստիճանների դասակարգումը կիրառելի է նաև երկբաղադրիչ բայական դարձվածքների նկատմամբ:

2.4 ԵԲԴ-ների բաղադրիչների ձևաբանական առանձնահատկությունները

ԵԲԴ-ի իմաստային կայունության երաշխիքը դրա կառուցվածքային կայունությունն է: Բառակապակցության բաղադրիչ բառերը կարող են քերականական տարբեր ձևերով դրվել, այնինչ ԵԲԴ-ում դրանք պահում են իրենց կայուն կառուցվածքը:

Հոդի գործածությունը ԵԲԴ-ի կազմում: Համեմատվող լեզուներում շատ ԵԲԴ-ներ ունեն հոդ, և առանց դրա դարձվածքը չի կարող գոյություն ունենալ: Հոդի բացակայությունը հանգեցնում է դարձվածքի իմաստի վերացմանը: Օրինակ՝ *աստղը բռնել* «հավանել, դուր գալ», *կաշին քերթել* «հոգին հանել, չարչաչել, կեղեքել», *square the circle* «փորձել անհնարին անել», *raise the roof* «սաստիկ աղմկել», *take the plunge* «վճռել»:

Համեմատվող լեզուներում շատ ԵԲԴ-ների անվանական բաղադրիչը կարող է գործածվել նաև առանց հոդի: Այս դեպքում էլ հոդի հավելումն է հանգեցնում դարձվածային իմաստի վերացմանը: Օրինակ՝ *աշխարհ արժենալ* «մեծ արժեք ունենալ», *միտք անել* «մտածել, խորհրդակցել», *shoot square* «վարվել օրինական ձևով», *play gooseberry* «սիրահարներին խանգարել»:

Որոշ ԵԴԲ-ների դարձվածային իմաստը չի տուժում հողի առկայությունից կամ բացակայությունից, ինչպես՝ *հոգի հանել-հոգին հանել* «ներել, չարչարել, կեղեքել», *կուրծք ծեծել-կուրծքը ծեծել* «երզվել, խոստանալ, հավատացնել, վստահեցնել»: Հայերենում որոշիչ հողի կիրառությունը կարող է իմաստատարբերակիչ դեր ունենալ: Օրինակ՝ *առաջ գալ* «ծագել, սկիզբ առնել, գոյանալ»-*առաջը գալ* «1. երևալ, 2. փոխհատուցվել», *կյանք տալ* «ծնել, լույս աշխարհ բերել»-*կյանքը տալ* «կյանքը զոհել»:

ԹՎի արտահայտման առանձնահատկությունները ԵԴԲ-ներում: Կան ԵԴԲ-ներ, որոնց ոչ բայական բաղադրիչները միշտ հոգնակի թվով են դրվում, ինչպես՝ *ծնկները ծալվել* «թշվառությունից ընկճվել», *curse one's stars* «բախտն անիծել», *dog smb's footsteps* «մեկի հետքերով գնալ, հետապնդել» կամ միայն եզակի թվով են դրվում, ինչպես՝ *ձեռք բերել* «մի բանի տիրանալ, գտնել ճարել», *cut the melon* «հասույթը կիսել»:

Որոշ դարձվածքներում ոչ բայական բաղադրիչը կարող է գործածվել և՛ հոգնակի, և՛ եզակի թվով, ինչպես՝ *բերանից թոցնեւ-բերաններից թոցնեւ, քթից բերել-քթերից բերել*, *darken smb's door-darken smb's doors* «ոտքը շեմին դնել», *tip the scale- tip the scales* «որոշիչ գործոն լինել»:

Ժխտման արտահայտությունը ԵԴԲ-ներում: Համեմատվող լեզուներում ԵԴԲ-ները կարող են ունենալ ժխտական մասնիկ կամ բառ: Հայերենում ժխտումը հիմնականում արտահայտվում է ԵԴԲ-ի բայական բաղադրիչին ավելացնելով չ- ժխտական մասնիկը, ինչպես՝ *ձայն չհանել, երեսը չքոնել*: Որոշ ԵԴԲ-ներում էլ ժխտումն արտահայտվում է ոչ մի, ոչինչ ժխտական դերանունների միջոցով, հազվադեպ՝ նաև չէ ժխտական բառով, ինչպես՝ *ոչ մի բանի չնայել, չէ ասել, ոչինչ չնշանակել, ոչ մի քննադատության չդիմանալ*:

Անգլերենում բավականին մեծ թվով ԵԴԲ-ներ ունեն ժխտական բառեր: ԵԴԲ-ների կազմում ժխտականությունը արտահայտվում է վերլուծական բնույթի կազմություններով: Օրինակ՝ *not to say much for* «լավ կարծիքի չլինել», *not to lift a hand* «մատը մատին չտալ, ոչինչ չանել», *not to believe one's ears* «ականջներին չհավատալ»: Ի տարբերություն *not* ժխտական բառի, որը օժանդակ բայի մաս է, *no* ժխտական բառը վերաբերում է անվանական բաղադրիչին: Օր.՝ *be no good* «անպետք, անօգուտ լինել»:

Ժխտման արտահայտման մյուս ձևը ժխտական դերանունների գործածությունն է, ինչպես՝ *count for nothing* «արժեք չունենալ», *stop at nothing* «ոչ մի բանի առաջ կանգ չառնել»:

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽԴԻՐ/ԿԱՊ ԿԱՄ ՄԱԿԲԱՅ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐ

3.1 Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի գործածության ոլորտը

Համեմատվող լեզուներում նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերն ամենից հաճախ գործածվում են առօրյա խոսակցական և ոչ պաշտոնական գրավոր լեզվում: Դա պայմանավորված է նրանով, որ այս հարադրավոր բայերը հաճախ ունենում են պատկերավոր և ոչ պաշտոնական երանգ: Օրինակ՝ *put up with* հարադրավոր բայը ավելի հաճախ գործածվում է առօրյա խոսակցության մեջ՝ արտահայտելով *հանդուրժել, համակերպվել* իմաստը: Պաշտոնական անգլերենում «հանդուրժել, համակերպվել» իմաստն արտահայտվում է *tolerate* բայի միջոցով: Հետո *գցել* «խնայել» հարադրավոր բայը նույնպես հատուկ է ոչ պաշտոնական լեզվին: Պաշտոնական լեզվում կգործածվի *հետո գցել* հարադրավոր բայի հոմանիշ *խնայել* բայը:

Որոշ հարադրավոր բայեր էլ թեև կարող են գործածվել պաշտոնական լեզվում, սակայն ավելի նախընտրելի է նույն իմաստը արտահայտող այլ կազմությունների գործածությունը: Օրինակ՝ *look up* «փնտրել/գտնել մի բան» բայը կարող է գործածվել գիտական լեզվում: Սակայն անգլերենի պաշտոնական ոճին ավելի համահունչ կլինի նույն իմաստի արտահայտությունը *consult* բայի միջոցով: Հայերենի *խոյս տալ* հարադրավոր բայը նույնպես կարող է գործածվել պաշտոնական լեզվում, սակայն նախընտրելի է այն փոխարինել *խուսափել* բայով:

Համեմատվող լեզուներում փոքրաթիվ հարադրավոր բայեր կարող են գործածվել նաև պաշտոնական լեզվում: Թեև դրանք քիչ են, սակայն աչքի են ընկնում հաճախական գործածությամբ: Օրինակ՝ *look into* «հետազոտել, քննել, ուսումնասիրել», *set out* «բացատրել, ներկայացնել», *figure out* «հասկանալ կամ լուծել որևէ խնդիր», *առաջ քաշել* «առաջադրել, առաջարկել, արձարժել», *վեր հանել* «բացահայտել, ցույց տալ»:

3.2 Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի ուսուցումը

Հայերենի և անգլերենի՝ որպես օտար լեզվի յուրացման ընթացքում սովորողների համար դժվարություններ են ստեղծում նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը: Հարադրավոր բայերի ընկալման և յուրացման հետ կապված դժվարություն է ստեղծում այն, որ հաճախ նույն միավորը կարող է լինել բազմիմաստ և ունենալ թե՛ բառային և թե՛ դարձվածային իմաստ: Դարձվածային իմաստ ունեցող միավորներից շատերն էլ իրենց հերթին կարող են լինել բազմիմաստ: Նույն հարադրավոր բայը կարող է գործածվել տարբեր համատեքստերում՝ արտահայտելով միանգամայն տարբեր իմաստներ: Օրինակ, *turn up* հարադրավոր բայն ունի հետևյալ իմաստները. 1) հայտնվել, գալ, ժամանել 2) բարձրացնել, ուժեղացնել, 3) գտնել կամ հայտնաբերել, 4) ինչ-որ բան ծախել կամ

փաթաթել, 5) պատահել, ընձենովել: Նույն կերպ նաև հայերենի *հեղ գցել* բայը կարող է արտահայտել մի քանի իմաստ, ինչպես՝ 1) մեկին ետ թողնել, առաջ անցնելուն խանգարել, 2) խոչընդոտել զարգացումը, առաջխաղացմանը խանգարել, 3) ուշացնել, 4) հետաձգել, 5) խնայել, հավաքել, տնտեսել:

Հայերենում ոչ բայական բաղադրիչը դրվում է բայական բաղադրիչից առաջ, ինչպես՝ *գործ բռնել, կյանք մտնել*, իսկ անգլերենում՝ բայական բաղադրիչից հետո, ինչպես՝ *fear for smth/smb, bring up*: Սակայն հաճախ ոչ բայական բաղադրիչը կարող է անջատվել բայից և փոխել իր դիրքը: Օրինակ՝ **slipped on** հարադրավոր բայի բաղադրիչը կարող է անջատվել բայից և փոխել դիրքը: *Ինչպես՝ She slipped on some flat sandals and made hedway downstairs. Ann slipped the jacket on to see what it looked like¹.*

Հայերենի շատ հարադրավոր բայերում էլ ոչ բայական բաղադրիչը կարող է դրվել թե՛ բայից հետո և թե՛ առաջ: Օրինակ՝ *առաջ գնալ* հարադրավոր բայը գործածվում է նաև *գնալ առաջ* ձևով, ինչպես՝ *-Գործի մեջ շա՛ր ես առաջ գնացել, տղա ջան՞: Չորս-հինգ վրիպ, դայուկ երեխաներ, որ փորձում են մնալ աշակերտ, կամ գնալ առաջ՝ լինել դերասան³:*

Ոչ բայական բաղադրիչի նման տեղաշարժը պայմանավորված է նրանով, որ անգլերենին տիպաբանորեն բնորոշ է VO շարադասական տիպը: Ուստի անգլերենում ոչ բայական բաղադրիչը թեև առանձնանում է բայից և փոխում է դիրքը, բայց երբեք չի նախորդում բային: Հայերենին բնորոշ են թե՛ OV, թե՛ VO շարադասական տիպերը, ուստի հայերենի հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչը հաճախ կարող է թե՛ նախորդել և թե՛ հաջորդել բայական բաղադրիչին:

Սովորողների համար դժվարություն է ստեղծում նաև այս բայերի մեծաքանակ լինելը: Մեկ բայը, հարադրվելով տարբեր մակբայների և նախդիրների/կապերի հետ, կարող է կազմել շատ հարադրավոր բայեր՝ արտահայտելով զանազան իմաստներ:

Այսպիսով, մակբայ կամ նախդիր/կապ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը մի շարք դժվարություններ են ստեղծում սովորողների համար թե՛ հայերենում և թե՛ անգլերենում: Այս դժվարությունների հիմքում ընկած են հետևյալ հիմնական պատճառները.

- բազմիմաստություն և դարձվածային իմաստ. հարադրավոր բայերը հաճախ բազմիմաստ են և կարող են գործածվել տարբեր համատեքստերում: Հաճախ դրանք, բառային իմաստից բացի, ունեն նաև դարձվածային իմաստ:

¹ Macmillan Phrasal Verbs Plus, Macmillan Publishers, Oxford, UK, 2005, p. 285.

² Քալանթարյան Ա., Խոստովանություն, ԱՐԵՎԱԿ-Արևելահայերենի ազգային կորպուս: [Էլեկտրոնային աղբյուր]: URL: http://eanc.net/EANC/search/?interface_language=am

³ Վերոյան Բ., Արտակարգ դեպքաններ, ԱՐԵՎԱԿ-Արևելահայերենի ազգային կորպուս: [Էլեկտրոնային աղբյուր]: URL: http://eanc.net/EANC/search/?interface_language=am

- շարադասություն. հայերենում ոչ բայական բաղադրիչը դրվում է բայական բաղադրիչից առաջ, իսկ անգլերենում՝ բայական բաղադրիչից հետո: Սակայն ոչ բայական բաղադրիչը կարող է նաև անջատվել բայից և փոխել դիրքը:

- քանակ. հարադրավոր բայերը մեծաքանակ են (հատկապես անգլերենում): Մեկ բայը, հարադրվելով տարբեր մակբայների և նախդիրների/կապերի հետ, կարող է կազմել բազմաթիվ հարադրավոր բայեր:

3.3 Հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչները

Ըստ ոչ բայական բաղադրիչի խոսքիմասային դերի՝ նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը բաժանվում են մի քանի խմբի:

Նախդրավոր հարադրավոր բայերում ոչ բայական բաղադրիչը կապվում է ոչ թե բայի, այլ որպես բայական լրացում հանդես եկող գոյականի կամ դերանվան հետ, ինչպես՝ *մեջ առնել*, belong to smb: Այս կազմություններն առանց բայական լրացման գործածվել չեն կարող: **Մակբայական հարադրավոր բայերում** ոչ բայական բաղադրիչը կապվում է միայն բայի հետ և կարող է գործածվել նաև առանց բայական լրացման, ինչպես՝ freeze over: **Մակբայական-նախդրավոր** տեսակը հատուկ է անգլերենին: Այս հարադրավոր բայերը կարող են ունենալ երկու ոչ բայական բաղադրիչ, որոնցից առաջինն ունենում է մակբայական, իսկ երկրորդը՝ նախդրային/կապական դեր: Առաջինը կապվում է բայական բաղադրիչի հետ, իսկ երկրորդը՝ բայի լրացման հետ: Օրինակ՝ put up with «հանդուրժել» հարադրավոր բայի սբ բաղադրիչը կապված է միայն բայի հետ և մակբայի դեր է կատարում, մինչդեռ with-ի միջոցով բայը կապվում է խնդրի հետ:

Հարադրավոր բայերում բաղադրիչների դրսևորած իմաստային հարաբերությունները լինում են հետևյալ տեսակի՝ 1) ոչ բայական բաղադրիչը կարող է ձևական լինել և ոչ մի ազդեցություն չունենալ բայական բաղադրիչի իմաստի վրա, ինչպես՝ *վեր ելնել*, *ցած ընկնել*, sit down «նստել», 2) ոչ բայական բաղադրիչը կարող է իմաստային նրբերանգ հաղորդել բայական բաղադրիչին, օր.՝ eat up հարադրավոր բայում սբ «վեր, վերև» բառը, հարադրվելով eat «ուտել» բայի հետ, վերջինիս հաղորդում է ավարտվածության իմաստ՝ «ուտել վերջացնել», 3) ոչ բայական բաղադրիչը կարող է ուղղության իմաստ հաղորդել բայական բաղադրիչին, ինչպես՝ *դուրս քաշել*, run out «դուրս վազել» 4) բայական և ոչ բայական բաղադրիչները գործածվելով միասին՝ ստանում են ընդհանուր իմաստ, որը տարբեր է նրանց բառային իմաստներից, օր.՝ bring «բերել» բայը և սբ «վեր, վերև» բառը հարադրվելով արտահայտում են մի նոր իմաստ, որը չի համընկնում ոչ մի բաղադրիչի բառային իմաստի հետ, այն է՝ «դաստիարակել»: *Վրա և գալ* բառերի հարադրությամբ կազմված *վրա գալ* հարադրավոր բայը ունի «գիրանալ, լցվել» իմաստը, որը տարբեր է իր բաղադրիչների բառային իմաստներից:

3.4 Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի զուգադրում

Ուսումնասիրության այս հատվածում իրականացվել է սբ, above-*վեր/վերև*, against-*դեմ/ընդդեմ*, back, aback, after, behind-*հետ/հետև* բաղադրիչ ունեցող

հայերեն և անգլերեն հարադրավոր բայերի զուգադրում՝ իմաստային ընդհանրությունների և տարբերությունների վերհանման նպատակով:

Անգլերենում՝ against, հայերենում՝ դեմ/ընդդեմ բաղադրիչ ունեցող կազմություններ: Համեմատվող լեզուներում այս բառերով կազմությունները արտահայտում են բազմազան իմաստներ: Մի շարք կազմություններում *դեմ* against բառով հարադրավոր բայերը նշում են *մի բանի հեն(վ)ելու, թիկնելու, դեմ անելու իմաստ*, ինչպես՝ *lean against smth* «թիկնել, հենվել մի բանի», *դեմ անել* «ուղղել մի բանի կողմը», *դեմ ցալ* «մի բանի հենարան դնել»: Օրինակ՝ *She would lean against the fence and admire the sunset every evening.*¹ Հայերենը՝ «Ամեն երեկո նա **հենվում** էր ցանկապատին և հիանում մայրամուտով»:

*Այս անգամ նրանց հաջողվեց բազմաթիվ ելարաններ դեմ անել պարիսպների:*²

Այս բառերով կազմված հարադրավոր բայերը համեմատվող լեզուներում կարող են արտահայտել *մեկին կամ մի բանի դեմ լինելու կամ հակադրվելու* իմաստ: Անգլերենում և հայերենում իմաստով համընկնում են հետևյալ կազմությունները՝ *go against-դեմ գնալ, հակառակվել, stand against-դեմ կանգնել, դիմադրել, be against-դեմ լինել, come against-դեմ ելնել, բախվել*: Օրինակ՝

I am against animal cruelty.³ Հայերենը՝ «Ես **դեմ եմ** կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքին»:

Որդիները, թոռները աղմուկ բարձրացրին, կտրուկ դեմ եղան, հեղոտ տեսներով Նունե մայրիկի համատությունը, խնդրեցին-աղաչեցին, փորձեցին համոզել:

Անգլերենում այս իմաստն են արտահայտում նաև հետևյալ հարադրավոր բայերը՝ *have smth against smb/smth* «մեկի/մի բանի դեմ մի բան ունենալ», *proceed against smb* «իրավական գործընթաց սկսել մեկի դեմ», *pronounce against smb* «մեկի դեմ վճիռ կայացնել», *set against smb* «մեկի դեմ տրամադրել»:

Հայերենում *ընդդեմ* բառով հարադրավոր բայերը նույնպես արտահայտում են *հակառակ կամ դեմ լինելու կամ մի բան անելու* իմաստ, ինչպես՝ *ընդդեմ գնալ* «դեմ գնալ», *ընդդեմ դառնալ* «հակառակվել», *ընդդեմ լինել* «դեմ լինել», *ընդդեմ հանել* «1. մեկի դեմ գրգռել, թշնամացնել, 2. հակառակ փաստարկ բերել»:

Անգլերենում *against-ը* գործածվում է նաև *մի բանի դիպչելու/քսվելու* կամ դրան նման իմաստ: Այս դեպքում բայական բաղադրիչը հիմնականում պահպանում է իր բառային իմաստը, իսկ *against-ը* տրական հոլովի իմաստ է հաղորդում բայական լրացմանը, ինչպես՝ *brush against smth* «հպվել/քսվել/խփվել մի բանի», *rub against smth* «մի բանի քսվել», *slam against smth* «խփվել մի բանի», *flatten against smth* «սեղմվել մի բանի»: Հայերենում այս իմաստը արտահայտվում է

¹ Reverso Context. [Electronic resource]: URL: <https://context.reverso.net/translation/english-russian/lean+against>

² Խանգալյան Ա., Մխիթար Սպարապետ, 1961, ԱՐԵՎԱԿ-Արևելահայերենի ազգային կորպուս: [Էլեկտրոնային աղբյուր]: URL: http://eanc.net/EANC/search/?interface_language=am

³ Reverso Context. [Electronic resource]: URL: <https://context.reverso.net/translation/english-russian/am+against>

⁴ Պետրոսյան Վ., Կրակե շափիկ, ԱՐԵՎԱԿ-Արևելահայերենի ազգային կորպուս: [Էլեկտրոնային աղբյուր]: URL: http://eanc.net/EANC/search/?interface_language=am

հիմնականում կրավորական սեռով դրված բայով և տրական հոլովով դրված բայական լրացմամբ: Օրինակ՝ The cat began to **rub against** her leg.¹ Հայերենը՝ «Կատուն սկսեց քսվել նրա ոտքին»:

He watched the waves **brush against** the shore.² Հայերենը՝ «Նա նայում էր, թե ինչպես են ալիքները խփվում ափին»:

Անգլերենում against-ով կազմությունները կարող են արտահայտել նաև *իրեն կամ ինչ-որ մեկին վնասից/վրանգից պաշտպանելու* իմաստ, ինչպես՝ guard against smth «մի բանից պաշտպանել, զգուշանալ, զերծ մնալ», insure against smth «ինչ-որ բանից ապահովագրվել», safeguard against smth «մի բանից պաշտպանել»:

Այս իմաստը հայերենում սովորաբար արտահայտվում է բացառական հոլովով դրված բայական լրացմամբ, ինչպես՝ Our streams and rivers must **be safeguarded against** pollution.³ Հայերենը՝ «Մեր վտակներն ու գետերը պետք է **պաշտպանված լինեն** աղտոտումից»:

Հայերենում կան *դեմ* բառով կազմություններ, որոնք ունեն *հայտուցել կամ հայտուցում սրանալ* իմաստը, ինչպես՝ *դեմ ելնել* «հատուցել, հատուցում ստանալ», *դեմը գալ* «փոխհատուցում ստանալ արածի համար»:

Up, above և վեր/վերև բառերով կազմված հարդրավոր բայերը համեմատվող լեզուներում ունեն հետևյալ նման իմաստները. դեպի վերև ուղղված գործողություն, արթնանալ/վեր կենալ, առողջական/ֆիզիկական վիճակը վերականգնել/կազդուրվել, բացահայտ(վ)ել/ պարզ(վ)ել/ի հայտ բերել, իրեն բարձր պահել/բարձր լինել: **Back, aback, after, behind, հետ/հեղև** բաղադրիչ ունեցող հարդրավոր բայերը համեմատվող լեզուներում ունեն հետևյալ նման իմաստները. վերադառնալ, հետ ստանալ, առաջընթացին խանգարել/հետ գցել, անցյալը հիշել:

Ընդհանուր իմաստներից գատ՝ վերոնշյալ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը ունեն նաև միայն տվյալ լեզվին հատուկ իմաստներ, որը բացակայում է մյուս լեզվում:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համեմատվող լեզուներում հարադրավոր բայերի կազմության, տեսակների, բաղադրիչների ուսումնասիրության հարցերը միշտ էլ գտնվել են լեզվաբանների ուշադրության կենտրոնում և հանգամանալից ուսումնասիրվել են: Սակայն հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային, իմաստային և գործառական առանձնահատկությունների զուգադրական քննություն չի կատարվել:

Ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի՝ մեր կատարած կառուցվածքային-իմաստային զուգադրական ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

¹ Reverso Context. [Electronic resource]: URL: <https://context.reverso.net/translation/english-russian/rub+against>

² Reverso Context. [Electronic resource]: URL: <https://context.reverso.net/translation/english-russian/brush+against>

³ Reverso Context. [Electronic resource]: URL: <https://context.reverso.net/translation/english-russian/had+safeguarded+against>

1. Հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի շարադասական կառուցվածքը երկու լեզուներում ունի հայելային տարբերություն. եթե հայերենում ոչ բայական բաղադրիչը նախորդում է բային, ապա անգլերենում այն դրվում է բայից հետո, ինչպես՝ *մեջ ընկնել, դուրս անել*, run out, put on.

2. Հայերենի և անգլերենի վերլուծական կառուցվածքի բայերի կազմում ոչ բայական բաղադրիչները դրսևորում են խոսքիմասային լայն ընդգրկում, սակայն եթե հայերենում գոյական բաղադրիչով կազմությունները քանակապես եռապատիկ գերազանցում են անգլերենին (3600-ը՝ 1200-ի դիմաց), ապա անգլերենում մակբայ կամ նախդիր բաղադրիչ ունեցող հարադրությունները մի քանի անգամ գերազանցում են հայերենի մակբայ կամ կապ բաղադրիչ ունեցող բայերին:

3. Համեմատվող լեզուներում հարադրավոր բայերի և ԵԲԴ-ների ոչ բայական բաղադրիչների համամեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենը գործողությունը կապում է առարկայական պատկերների հետ: Իսկ անգլերենն ավելի շատ շեշտում է գործողության ուղղվածությունը և տարածական հարաբերությունը:

4. Համեմատվող լեզուներում հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչները հիմնականում պարզ ձևային են, սակայն հայերենը, դրսևորելով իր համադրական լեզվատիպի հնարավորությունները, լայնորեն կիրառում է նաև բարդ կաղապարներ (S, Sf, Sff, aS, ajS, aaSf, Sa, SaSfa, Saa, SS, SSa, SSf, SfS, SSaf, SfSf, SaSa, SjS, Sjsa, Sjsf, Sjsaf, SajS, Sfsf, Sjsff, aSjS, ScS, SfcSf, ScSf, ScSa), մինչդեռ անգլերենում գերակշռում է բաղադրիչների վերլուծական պարզությունը (S, Sf, fS, aS, Sa, Saf, fSa, SS, SSf, fSS, SaSa), որտեղ իմաստային ծանրաբեռնվածությունը տեղափոխված է բառի ներքին կառուցվածքից դեպի շարադասություն և համատեքստ:

5. Համեմատվող լեզուներում դարձվածային իմաստ արտահայտող հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչները հիմնականում պատկանում են իմաստային տարբեր խմբերի՝ մարմնի մասեր, մարդու ֆիզիկական և հոգեկան հատկանիշներ, բնության երևույթներ, կենդանական աշխարհ և սննդամթերքի անվանումներ: Հայերենի և անգլերենի վերոնշյալ երկբաղադրիչ բայական դարձվածքները հաճախ ունեն իմաստային նույն հիմքը, ինչպես՝ *միտքը գալ*-come into one's mind, *արյունը թափել*-shed smb's blood: Իսկ այն ԵԲԴ-ները, որոնք չունեն իրենց համարժեքները մյուս լեզվում, ցույց են տալիս յուրաքանչյուր ժողովրդի ինքնատիպ մտածողությունը, ինչպես՝ *արդի գնալ*, aim for the stars.

6. Համադրական տիպի հայերենում հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչի թվի, հոդի և ժխտման քերականական իմաստները հիմնականում արտահայտվում են կցական կազմությունների միջոցով, մինչդեռ անգլերենում ավելի շատ գործածվում են վերլուծական ձևեր:

7. Նախդիր/կապ, մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի հարադրավոր բայերում բայական բաղադրիչը հանդես է գալիս ավելի քան 46 նախդիրների ու մակբայների

հետ, իսկ հայերենում բայի հետ հաճախ գործածվում են շուրջ 20 կապեր ու մակբայներ: Անգլերենում նախդիրների և մակբայների մեծ քանակը փաստում է, որ անգլերենում սա նոր բառեր կազմելու հիմնական ձևերից մեկն է, մինչդեռ հայերենում դրանց համեմատաբար փոքր թիվը հուշում է, որ հայերենը նույն նպատակին հասնում է նաև այլ միջոցներով:

8. Հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի ուսուցումը սովորողների համար ստեղծում է զգալի դժվարություններ, որոնք բխում են դրանց իմաստային բազմաշերտությունից և դարձվածային բնույթից, երկու լեզուներին բնորոշ շարահասական առանձնահատկություններից, ինչպես նաև դրանց քանակական մեծ ծավալից ու մեկ բայական հիմքով բազմաթիվ նոր իմաստներ կազմելու հնարավորությունից:

9. Սր, above և *վեր/վերև* բառերով կազմված հարադրավոր բայերը համեմատվող լեզուներում ունեն նման իմաստներ. օր.՝ առողջական կամ ֆիզիկական վիճակը վերականգնել, կազդուրվել, ինչպես՝ *վեր կանգնել*, perk up: Against և դեմ/ընդդեմ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը ունեն հետևյալ նման իմաստները. մի բանի հեն(վ)ել, թիկնել, օր՝ *դեմ անել*, lean against smth, մեկին/մի բանի դեմ լինել, հակառակվել, օր՝ *դեմ գնալ*, go against. Back, aback, after, behind-*հետ/հետև* բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը համեմատվող լեզուներում ունեն հետևյալ նման իմաստները. վերադառնալ, օր.՝ *հետ գալ*, go back, անցյալը հիշել, մտովի դեպի անցյալ գնալ, ինչպես՝ *հետ նայել*, look back, go back: Ընդհանուր իմաստներից գատ՝ վերոնշյալ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը ունեն նաև միայն տվյալ լեզվին հատուկ իմաստներ, որը բացակայում է մյուս լեզվում:

10. Իմաստային զուգահեռների առկայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չնայած հայերենի և անգլերենի հարադրավոր բայերն ու երկբաղադրիչ բայական դարձվածքները ձևով ու կառուցվածքով տարբերվում են, դրանց իմաստային հիմքը հաճախ նույնն է: Շատ դեպքերում մարդկային մտածողությունն ու աշխարհընկալումը երկու լեզուներում էլ նմանատիպ պատկերավոր լուծումներ են գտնում: Միևնույն ժամանակ, այն դարձվածքները, որոնք չունեն իրենց համարժեքները մյուս լեզվում, ցույց են տալիս յուրաքանչյուր ժողովրդի ինքնատիպ մտածողությունը, որը բնորոշ է միայն տվյալ ժողովրդի աշխարհընկալմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. **Սիմոնյան Ս. Կ.**, Ժամանակակից անգլերենի և հայերենի սր, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների զուգադրական քննություն, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, N3, 62, Երևան, 2023, էջ՝ 45-54:

2. **Սիմոնյան Ս. Կ.**, Ժամանակակից հայերենի և անգլերենի երկբաղադրիչ բայական դարձվածքների ձևաբանական որոշ առանձնահատկություններ, Շիրակի

Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, № 2, ՊՐԱԿ Բ, Գյումրի, 2023, էջ՝ 29-40:

3. **Սիմոնյան Ս. Կ.**, Ժամանակակից հայերենի և անգլերենի բայական հարադրությունների ոչ բայական բաղադրիչները և դրանց առաջացրած իմաստային փոփոխությունները, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, № 2, ՊՐԱԿ Բ, Գյումրի, 2023, էջ՝ 41-52:

4. **Սիմոնյան Ս. Կ.**, Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների ուսուցումը, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու N 15, Բանասիրական գիտություններ, Գավառ, 2023, էջ՝ 402-413:

5. **Simonyan S. K.**, Structural-Semantic Types of Modern Armenian and English Two-Component Verbal Phraseological Units, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ, N 2, Վանաձոր, 2023, էջ՝ 21-30:

6. **Սիմոնյան Ս. Կ.**, Հայերենի և անգլերենի բայական հարադրությունների անվանական հարադիրների բառակազմական կաղապարները, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու N 5, Գավառ, 2018, էջ՝ 630-641:

7. **Սիմոնյան Ս. Կ.**, Ժամանակակից հայերենի և անգլերենի վերլուծական բայերի բնորոշումը և կառուցվածքային կաղապարները, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան Լեզվի հետախույզ, Երիտասարդ լեզվանաբաններ. գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ», Երևան, 2016, էջ 110-119:

СИМОНЯН СОНА КОСТАНТОВНА

АНАЛИТИЧЕСКИЕ ГЛАГОЛЬНЫЕ КОНСТРУКЦИИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ (СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 “Общее и сравнительное языкознание”

Защита состоится 23 марта 2026 г. в 15:00 часов, на заседании специализированного совета КВОН РА 019 по Лингвистике, действующего при Институте языка имени Р. Ачаряна НАН РА
(адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича/15)

РЕЗЮМЕ

Актуальность данной диссертации обусловлена тем, что современная лингвистика придаёт большое значение сравнительному изучению языков, что необходимо для всестороннего понимания их структурных и функциональных особенностей. Сопоставительная лингвистика, посредством систематического анализа двух или более языков, позволяет формулировать общие выводы и решать широкий круг теоретических и педагогических задач. Особое внимание уделяется

изучению систем словообразования, так как они обогащают словарный запас языка и способствуют развитию языковой компетенции носителей. Сравнительный анализ армянского и английского языков на уровнях словообразования и семантики позволяет выявить как общие закономерности, так и специфические особенности этих двух языков.

Объектом исследования являются аналитические глагольные конструкции современного армянского и английского языков.

Целью данного исследования является изучение структурных и семантических особенностей аналитических глагольных конструкций в современном армянском и английском языках для выявления их сходств и различий. Для достижения поставленной цели исследования нами были выдвинуты следующие **задачи**: 1) изучить частеречную принадлежность неглагольных компонентов аналитических глагольных конструкций в армянском и английском языках, выявив количественное соотношение их распространенности в обоих языках, 2) проанализировать структурно-типологические различия аналитических глагольных конструкций путем сопоставительного анализа словообразовательных моделей их компонентов, 3) классифицировать двухкомпонентные глагольные фразеологические единицы в соответствии с семантическими группами неглагольного компонента и выявить особенности формирования их лексико-морфологический и фразеологического значения в сопоставляемых языках, 4) осуществить структурно-семантический анализ аналитических глагольных конструкций армянского и английского языков с предложным/послеложным или наречным компонентом, выявив их типологические различия и особенности употребления, 5) сопоставить семантические проявления аналитических глагольных конструкций с компонентами *up, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ, back, aback, after, behind-հետ/հետև* в английском и армянском языках и выявить их межязыковые сходства и различия.

Научная новизна диссертации: Несмотря на наличие работ по именованным конструкциям, комплексный сопоставительный анализ именно глагольных аналитических конструкций в паре армянский-английский ранее не проводился. Научная новизна диссертации обусловлена систематическим сопоставительным анализом структурных, семантических и функциональных особенностей аналитических глагольных конструкций в современном армянском и английском языках.

Методология диссертации. В ходе исследования были использованы описательный, сопоставительный методы, а также методы анализа и моделирования. Описательный метод позволил представить структуру изучаемых языковых единиц и частеречную принадлежность их компонентов. Сопоставительный метод дал возможность выявить сходства и различия аналитических глагольных конструкций в армянском и английском языках. Метод анализа применялся при изучении структурных и семантических особенностей

аналитических глаголов в обоих языках. С применением метода моделирования были разработаны обобщенные модели компонентов аналитических глагольных конструкций.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трёх глав, заключения, библиографии и списка аббревиатур.

Во **введении** обосновывается актуальность темы, определяются цель и задачи исследования, представляются объект исследования, научная новизна и методология. Излагается история изучения аналитических глагольных конструкций в армянском и английском языкознании.

В **первой главе** аналитические глагольные конструкции классифицируются по частям речи их неглагольных компонентов. Также в главе представлен сравнительный анализ словообразовательных моделей именных компонентов в современных армянском и английском языках.

Во **второй главе** двухкомпонентные глагольные фразеологические единицы армянского и английского языков классифицируются по значению их неглагольных компонентов и анализируются с точки зрения семантических, лексических и морфологических особенностей.

В **третьей главе** рассматриваются аналитические глагольные конструкции с предложными/послеложными или наречными компонентами. Исследуются сферы их употребления, анализируются трудности при обучении, а также представлен сравнительный анализ армянских и английских аналитических глагольных конструкций с компонентами *up*, *above-վեր/վերև*, *against-դեմ/ընդդեմ*, *back*, *aback*, *after*, *behind-հետ/հետև* с выявлением сходств и различий.

В **заключении** подводятся основные результаты исследования.

Диссертация состоит из 121 страниц.

SONA KOSTANT SIMONYAN

**VERB-PARTICLE CONSTRUCTIONS IN MODERN ARMENIAN AND ENGLISH
(A COMPARATIVE STUDY)**

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.02, "General and Comparative Linguistics"

The defense will be held on 23 March, 2026 at 15:00, at the session of Specialized Council on Linguistics of 019 HESC RA in the Institute of Language after Hr. Acharian NAS RA

(address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

Relevance of the topic: The relevance of this dissertation lies in the emphasis modern linguistics places on the comparative study of languages, which is essential for a

thorough understanding of their structural and functional characteristics. Comparative linguistics, through the systematic analysis of two or more languages, enables the formulation of general conclusions and addresses a range of theoretical and pedagogical issues. Attention is also given to the study of word-formation systems, as they enrich a language's vocabulary and enhance speakers' linguistic competence. A comparative analysis of Armenian and English at the levels of word formation and semantics allows for the identification of both shared patterns and distinctive features in the two languages.

The **object** of the study is verb-particle constructions in modern Armenian and English.

The main goal and tasks of the dissertation: The main goal of the research is to study the structural and semantic characteristics of verb-particle constructions in modern Armenian and English in order to reveal their similarities and differences. To achieve this goal, we have set the following tasks: 1) to examine the part-of-speech affiliation of the non-verbal components in Armenian and English verb-particle constructions, identifying the quantitative correlation of their occurrence in both languages, 2) to analyze the structural-typological differences of verb-particle constructions through a comparative study of the word-formation patterns of their components, 3) to classify two-component verbal phraseological units according to the semantic groups of their non-verbal components and to identify the patterns of their lexical-morphological and phraseological meaning formation in the compared languages, 4) to conduct a structural-semantic examination of verb-particle constructions containing prepositional/postpositional or adverbial components in English and Armenian, identifying their typological differences and functional characteristics, 5) to compare the semantic manifestations of verb-particle constructions containing the components *up, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ, back, aback, after, behind-հետ/հետև* in English and Armenian, and to identify their cross-linguistic similarities and differences.

Scientific novelty of the dissertation: Comparative studies on Armenian and English analytical constructions, particularly verbal compositions, are limited. Research has been conducted on Armenian and English compositions based on nominal phrases. However, there are no comparative studies specifically focused on the verb-particle constructions of Armenian and English. The scientific novelty of this dissertation is determined by the systematic comparative analysis of the structural, semantic, and functional characteristics of verb-particle constructions in contemporary Armenian and English.

Methodology of the dissertation: During the research, descriptive, comparative, analytical, and modeling methods were applied. The descriptive method was used to present the structure of the studied linguistic units and the part-of-speech affiliation of their components. The comparative method enabled the identification of similarities and differences between Armenian and English verb-particle constructions.

Through the analytical method, the structural and semantic characteristics of modern Armenian and English verb-particle constructions were examined. Finally, by applying the modeling method, generalized patterns for the components of these verb-particle constructions were developed.

The structure of the dissertation: The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and a list of abbreviations.

The **introduction** explains the relevance of the topic, defines the main goal and tasks of the research, and presents the object of study, scientific novelty, and methodology. It outlines the history of the study of verb-particle constructions in Armenian and English linguistics.

In **the first chapter**, verb-particle constructions are classified according to the part-of-speech categories of their non-verbal components. The chapter further presents a comparative analysis of the word-formation patterns of non-verbal components in contemporary Armenian and English verb-particle constructions.

In **the second chapter**, two-component verbal phraseological units are grouped according to the meaning of their non-verbal components. The chapter analyzes their lexical-verbal and morphological features, classifies them based on the degree of semantic fusion of their components.

The **third chapter** examines verb-particle constructions containing prepositional, postpositional, or adverbial components. It explores their usage domains, analyzes pedagogical challenges, and classifies them according to the part of speech of their non-verbal components. Furthermore, it provides a comparative analysis of Armenian and English constructions containing the components *up, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ, back, aback, after, behind-հետ/հետև*, highlighting their cross-linguistic similarities and differences.

The conclusions sums up the main outcome of the study. The dissertation comprises 121 pages.

